ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/5730-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0) Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2.Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 145- Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկություններ և դիտողություններ չունի:

Միաժամանակ հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 135.2-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն նախատեսելիս օրենսդիրը տարբերակված մոտեցում է նախատեսել այդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված իրավախախտումների համար, այն է՝ տրանսպորտային միջոցներում ծխախոտային արտադրատեսակներ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը, մասնավորապես՝

«1. Տրանսպորտային միջոցի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տրանսպորտային միջոցների) վարորդի կողմից տրանսպորտային միջոցի ընթացքի ժամանակ ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնապատիկի չափով, և տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներում կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլներում ծխախոտային արտադրատեսակ կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ օգտագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի նկատմամբ՝ նաև տուգանային միավորի կիրառում՝ 1 միավոր:»:

Սույն փոփոխությամբ տուգանային միավորի կիրառման մասով Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը նույնացվում են, ինչը կարծում ենք վերանայման անհրաժեշտություն ունի:

Առաջարկում ենք նաև օրենքի դրույթների համար նախատեսել մեկ միասնական ուժի մեջ մտնելու ժամկետ, մասնավորապես՝ ուժի մեջ մտնելու պահին տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց՝ մինչև օրենքն ուժի մեջ մտնելը հատկացված 9 միավորի փոխարեն հաշվարկել 13 միավոր, իսկ օրենքն ուժի մեջ մտնելու պահին վարելու իրավունքը կասեցված անձանց 13 միավոր հատկացնել կասեցման ժամկետի ավարտին հաջորդող օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 25.1-ին հոդվածում՝

1) 2-րդ մասում՝ «9» թվերը փոխարինել «13» թվերով,

2) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Սույն օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար որպես վարչական պատասխանատվության միջոց կիրառվում է 0.25, 0.5, 1, 1.5, 2, 3, 4 կամ 5 տուգանային միավոր:»:

Հոդված 2. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 5-րդ մասում՝ «2» թիվը փոխարինել «3» թվով:

Հոդված 3. Օրենսգրքի 123.3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

Հոդված 4. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 11-րդ մասում՝ «1» թիվը փոխարինել «1.5» թվով:

Հոդված 5. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 17-րդ մասում՝ «2» թիվը փոխարինել «3» թվով:

Հոդված 6. Օրենսգրքի 124-րդ հոդվածի 18-րդ մասում՝ «3» թիվը փոխարինել «4» թվով:

Հոդված 7. Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասում՝ «4» թիվը փոխարինել «5» թվով:

Հոդված 8. Օրենսգրքի 129.3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «9 կամ ավելի» թիվը եւ բառերը փոխարինել «13 կամ ավելի» թվով եւ բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 135.2-րդ հոդվածի 1-ին մասում՝ «0.5» թիվը փոխարինել «1» թվով:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մայիսի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձին մեկ տարվա համար հատկացվում է 13 միավոր՝ նրան հատկացված 9 միավորի ժամկետի ավարտից հետո՝ միավորների վերահաշվարկման օրը, իսկ վարելու իրավունքը կասեցված լինելու դեպքում՝ կասեցման ժամկետի ավարտին հաջորդող օրը:

3. Սույն օրենքի 2-9-րդ հոդվածները մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց համար ուժի մեջ են մտնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 145 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)

ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Մկրտչյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողո- վում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխու- թյուններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախա- գիծը (Պ-997-16.01.2025-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.02.2025

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ